ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.08.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/118

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Էկոֆորմ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Ա. Մարտիրոսյանի (լիազորագիր տրված՝ 19.07.2019թ.)

«Սպասարկում» ՊՈԱԿ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Տ. Հովհաննիսյանի (լիազորագիր տրված՝ 19.07.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.07.2019թ. թիվ 26/26-1/11641-2019 գրությամբ «Էկոֆորմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սպասարկում» ՊՈԱԿ-ի 17.06.2019թ. թիվ 03/148 և 08.07.2019թ. թիվ 03/174 գրությունների հիման վրա, 11.07.2019թ. թիվ 26/26-1/11641-

2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Էկոֆորմ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Էկոֆորմ» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Էկոֆորմ» ՍՊԸ-ն 16.07.2019թ. գրությամբ հայտնել է, որ «Սպասարկում» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7 ծածկագրով ընթացակարգին հայտը ներկայացնելու նախորդ օրը՝ ս/թ. մայիսի 20-ին կատարել է իր պետական բոլոր վճարումները՝ բանկային փոխանցման միջոցով, սակայն բանկային փոխանցման գանձապետարանի հաշվին ուշ հասնելու պատճառով 20.05.2019թ. դրությամբ առաջացել է տույժ 1024 ՀՀ դրամի չափով, որի հիման վրա մերժվել է Ընկերության հայտը՝ 6-րդ չափաբաժնի մասով, քանի որ 1024 ՀՀ դրամը գերազնացել է գնային առաջարկի մեկ տոկոսը՝ կից ներկայացնելով ՊԵԿ-ի և Հայէկոնոմբանկի կողմից տրված փաստաթղթերը՝ 20.05.2019թ. դրությամբ հարկային պարտավորությունների և փոխանցումների մասով:

Ընկերությունը 22.07.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Էկոֆորմ» ՍՊԸ-ն իր հարկային պարտավորությունները մարում է ըստ ժամանակացույցի՝ ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր ամսվա 20-ին և գանձապետարանի միասնական հաշվին երբեմն ուշ արտացոլվելու հետևանքով առաջանում են տուգանքներ:

Ընկերությունը հայտնել է նաև, որ ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում արձանագրված 1054 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունը մարվել է ս.թ հունիսի 20-ին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/118 ընթացակարգի շրջանակներում 19.07.2019թ ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «Սպասարկում» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Սպասարկում» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.06.2019թ. թիվ 03/148 և 08.07.2019թ. թիվ 03/174 գրություններով հայտնել է, որ «Սպասարկում» ՊՈԱԿ-ի կարիքների համար մայիսի 15-ին հրապարակված ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7 ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում հարցում է ներկայացվել 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած «Էկոֆորմ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՊԵԿ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պատասխան, ըստ որի՝ «Էկոֆորմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 1024 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություններ, որը գերազանցում է 6-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը, որից հետո համաձայն՝ Կարգի 47-րդ կետի մասնակցին տրվել է մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունը շտկելու համար:

Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է վճարման հանձնարարականներ և ՊԵԿ-ի կողմից տրված տեղեկանք, որտեղ արտացոլված է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայությունը:

Համաձայն Կարգի 44-րդ կետի՝ հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժել է Ընկերության հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/118 ընթացակարգի շրջանակներում 19.07.2019թ ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ՆԳ-2019/118 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/118 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Սպասարկում» ՊՈԱԿ-ի կարիքների համար հայտարարվել է «ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով **22.05.2019թ.** մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Էկոֆորմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2019թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Էկոֆորմ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 05.06.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Էկոֆորմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 1 054 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2019թ. թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Էկոֆորմ» ՍՊԸ-ի հայտը 6-րդ չափաբաժնի մասով մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.07.2019թ. թիվ 26/26-1/11641-2019 գրությունը, «Սպասարկում» ՊՈԱԿ-ի 17.06.2019թ. թիվ 03/148 և 08.07.2019թ. թիվ 03/174 գրությունները և կից փաստաթղթերը, «Էկոֆորմ» ՍՊԸ-ի կողմից ՍՑ-ՆԳ-2019/118 ընթացակարգի շրջանակներում ներկայացված փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ (հետայսու նաև՝ Օրենք) օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին,

3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին

ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանութ-յան մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց

պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

«Սպասարկում» ՊՈԱԿ-ի կարիքների համար հայտարարվել է «ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***22.05.2019թ.*** մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Էկոֆորմ» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից մասնակցության հայտի թիվ 5 հավելվածով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը 5-րդ չափաբաժնի մասով կազմել է 148 000 ՀՀ դրամ, 6-րդ չափաբաժնի մասով՝ 66 000 ՀՀ դրամ, 8-րդ չափաբաժնի մասով՝ 198 000 ՀՀ դրամ և 10-րդ չափաբաժնի մասով՝ 640 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2019թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Էկոֆորմ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 05.06.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Էկոֆորմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 1 054 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2019թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Էկոֆորմ» ՍՊԸ-ի հայտը 6-րդ չափաբաժնի մասով մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Էկոֆորմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն, մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 13.06.2019թ. տրամադրված թիվ 9499 տեղեկանքը, համաձայն որի 20.05.2019թ. դրությամբ Ընկերությունն ունեցել է 1 508 174 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:

Միևնույն ժամանակ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի 20.05.2019թ. թիվ 263 և թիվ 264 փոխանցման անդորրագրերը, որոնց համաձայն՝ «Էկոֆորմ» ՍՊԸ-ի կողմից 20.05.2019թ. «900008000490» և «900005001186» գանձապետական հաշվեհամարներին իրականացվել են համապատասխանաբար 1 467 220 ՀՀ դրամի և 41 000 ՀՀ դրամի գումարի վճարումներ:

Ինչպես նաև ՍՑ-ՆԳ-2019/118 ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը 22.06.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է նաև, որ ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում արձանագրված 1054 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունը Ընկերության կողմից մարվել է ս.թ հունիսի 20-ին՝ կից ներկայացնելով «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի 20.06.2019թ. թիվ 1016 փոխանցման անդորրագիրը, որի համաձայն՝ «Էկոֆորմ» ՍՊԸ-ի կողմից 20.06.2019թ. «900008000490» գանձապետական հաշվեհամարին իրականացվել է 1 339 000 ՀՀ դրամ գումարի վճարում:

Այսպիսով՝ «Էկոֆորմ» ՍՊԸ-ն «ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից

տրամադրված եզրակացության համաձայն՝ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /22.05.2019թ./ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության չափը, գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը (6-րդ չափաբաժին՝ 66 000 ՀՀ դրամ):

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք***, ***որոնք <u>հայտը ներկայացնելու օրվա դրությամբ</u>*** հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ***ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը***, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը ***գերազանցող ժամկետանց պարտավորություններ:***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Միաժամանակ Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու*** և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված ***հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող*** կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը***, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ «Էկոֆորմ» ՍՊԸ-ն «ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի գտնում եմ, որ առկա է «Էկոֆորմ» ՍՊԸ-ին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.07.2019թ. թիվ 26/26-1/11641-2019 գրությամբ «Էկոֆորմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էկոֆորմ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**